




ՀԱՅԲԱԹԱԹԵՐԹ

ԱՐԹԱԹԱԹԵՐԹ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 145

2 ՄԱՅԻՍ 1914


ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՄ
ԵՆՆԻ
ՏՈՒՐԻՆ

ՏՕՂԱՑՈՅՑ



Մայիս	3	†	Կիր.	գկ.	Դ.	Կարմիր	Կիւրակ:
	4		Բշ.	դձ.	ԻԳ.	or	Յինանց :
	5		Գշ.	դկ.	ԻԴ.	or	Յինանց :
	6		Դշ.	ւձ.	ԻԵ.	or	Յինանց :
	7		Եշ.	ւկ.	ԻԶ.	or	Յինանց :
	8		Ուր.	բձ.	ԻԷ.	or	Յինանց :
	9		Շք.	բկ.	ԻԸ.	or	Յինանց :



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՆԱԹԱԹԵՐԹ

Զորրոդ սարի ② 2 Մայիս 1914 ② Թիւ 145

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մտքէ որ Կարողիկէ Արձագանգ շարքաքերը շա-
բունակէ Հայաստանի կարող իկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա
թառել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շարքաքերը, ինչպէս նաեւ ամոր խմբագիրներն եւ ընթերցողներն»:

Նամակ Կարդ. Մէրի ժէ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կարողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, քնդ 60780 քուանմարտ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ

ՈՒՍՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻԻ

Ստանունեն

Ի Սամսոն տեղի ունեցաւ հանդիսիւ Տը-
րապիզոնի թեմական Քերջ հաստատութենէն
նորընծայ Մեղքոնեան Երանուհւոյ Ուխտա-
ղութիւնը: Հանդիսապիրն էր Արհի. Վիճա-
կաւորնիս, որ ըստ պատշաճի քարոզ մը խօ-
սեցաւ: Կ'արժէ որ ամիրտիկենք անոր իմաստ-
ներէն քաղուած մը, որ կրնայ պատեհ առիթ
և հեղինակաւոր հերքում մը նկատուիլ այն
տղեղ ու անվայել հրատարակութեանց, ու-
րոնք այս կողմերն ալ երեւան կու գան գոե-
հիկ գրիչներէ՝ վարկաբեկ ընելու համար մա-
նաւանդ Կաթողիկէ կղերն, և ծանօթ է ինչ
դիւմամբ:

Ուխտաղութիւնը խորհրդական մ'է և
ո'չ խորհուրդ, վիճակի մը հանդիսաւոր ընս-
րութիւնն է և ո'չ ձեռնաղրութիւն: Անով
Աստուծոյ սիրոյն նուիրուած անձը կուգայ
կամովին զոհելու զինքն և ինչ որ իրենն
կրնայ ըլլալ՝ աւելի մօտէն ծառայելու համար
Աստուծոյ: Հետեւելով աւետարանական հրա-
ւէրին: «Եթէ կ'ուզէ մէկը ետեւս գալ, բո'ղ
ուրանայ իր անձը, առնու խաչը եւ գայ ե-
տեւս: Վասն զի ով որ կ'ուզէ իւր անձը
կենդանի պահել՝ գայն կորսնցնելու է, եւ
ի՞նձ համար կեանքը կորսնցնողն պիտի գտնէ
զանի» (Մատթ. Ժ. 24. 25. Մրկ. Ը. 34.
ՂԿ. Թ. 23.):

Սակայն կը լսուի աշխարհը՝ որ կը հեգ-
նէ, մարմինը՝ որ կ'ապստամբի, սատանան՝
որ կը վարազանայ ասոր դէմ: Լպիրշ ու լկտի
հրատարակութիւններ կը շրջին հրթիռ, վար-
կաբեկ ընելու համար աստուածային հրաւէ-

րին հետեւողներու վիճակը. Հոգ չէ մուրն ալ պէտք է՝ գոյներ ցայտեցնելու և աչքառու ընելու համար. չարախօսութիւններն երեւան պիտի հանեն առաքինութիւնը. Ասկից չի վախնար ո՛չ Կաթողիկէ Եկեղեցին, ո՛չ անոր ծառայող կուսակրօններու հաւատարիմ քանակը. Ընդհակառակն համոզուած են անոնք, ըստ Առաքելոյն, և անոնց հետ ճշմարիտ քրիստոնեայք թէ՛ զգայաւոր մարդն չի կրնար ըմբռնել ինչ որ հոգեկան է, և ասոր համար անկուճ մը, սխալ մը, չարութիւն մը՝ յաճախ յերկրուած պատրուակ կ'ըլլայ հայհոյելու ամբողջ սրբութեան դէմ. Եւ հոս է միայն որ կ'արժէ ձայն բարձրացնել, բժիշկի մը ապիկարութիւնը, գիտնականի սխալը, նաւորդի մը նաւաբեկութիւնը չենք տեսներ թէ բանաւոր առիթ ըլլայ բժշկութեան, գիտութեան, նաւորգութեան դէմ ելլելու:

Ինչէ՞ն է որ մէկուն միւսին անկումով ամբողջ դասակարգի մը դէմ ատելութիւն կը թելադրուի. Իրա՞ւ են ամէն զրոյցներ, Կըրնա՞յ արդարանալ կուսակրօնութեան դէմ յարձակումը:

Երկու բառ՝ այս հարցումներուն, աւելի չարժեք. Վերցուցէ՛ք, ըսաւ, տարիներ առաջ Գերմանացի դիւանագէտ մը, վերցուցէ՛ք Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջէն կուսակրօնութիւնը և դիւրաւ զայն պիտի տապալենք. Ահա՛ ուսկից կը մեկնի ատելութիւնը. Այդ ատելութիւնը ընդհանրացնելու է, ուստի զրպարտութեան ալ ձեռք զարնելու է, ահա՛ չարութիւնը. Մարդը միայն անասուն հնթադրելու է, ահա սխալը. որով միայն կուսակրօնութեան դէմ յարձակումը կրնայ արդարանալ, ուսկից սքաւալղծերու գարշելի վոհմակը՝ Լուտերն ալ մէջը. «Խոզ յուացեալ՝ րնդ սիղմ քաւալեալ» (Բ. Պետ. Բ. 22):

Ինչ է այս մասին աստուածային կարգադրութիւնը, որուն կը հետեւի Կաթողիկէ Եկեղեցին. Բրիտոս Տէրն մեր ըսած է թէ «Են ներքինի՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից, որ կարողն է ցանել ցարցի» (Մտթ. ԺԹ. 12) Կուսակրօնութեան կ'ականարկէ, որ կա-

մաւոր եղած է միշտ. Հետեւաբար իբր կատարելագոյն ճամբայ Աստուծոյ ծառայելու ընդհանուր ընթացքէն վեր և քիչերուն վերապահուած վիճակ մը կազմած է. Բայց որովհետեւ վասն արքայութեան երկնից, ընտրելագոյն վիճակ մըն է, ուստի Բրիտոս զայն հրեշտակաց վիճակին համեմատած է (Հմտ. Մտթ. ԻԲ. 30) և եկեղեցին Պօղոս Առաքելոյն հետ զայն յանձնարարած է և նախապնծար համարած է. «Ջայս ասեմ ներելով եւ ոչ հրաման ցալով. քանզի կամիմ եք ամենայն մարդ յինեք իբրեւ զիս». «Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնե ոչ ունիմ, բայց խրաւ ցամ, համարիմ քե այնպէս յաւիցեք». Անոր համար. Կապեալ ես ի կիմ՝ մի՛ խնդրեք արձակել, արձակեալ ես ի կնոջե, մի՛ խնդրեք կիմ»: Բայց բնականաբար Աստուծոյ նուիրուողն Աստուծոյ միայն հաճոյանալու համար վայել է որ կուսակրօն ըլլայ. «Ձի որ անկիցն է՝ հոգայ զՏեառն քե որպէս հանոյ լիցի Տեառն». «Ինչպէս, «Որ կանամբին է, հոգայ զաւսարհիս» (Ա. Կոր. 1):

Սակայն կուսակրօնութիւնը տեղի կըրտայ զեղծումներու. — Ինչ բան զերծ է զեղծումէ, աւելի շատ չէն ամուսնական վիճակի զեղծումներն. և այսու հանդերձ ամուսնական վիճակը չի դատապարտուիր. Ազատ սիրոյ շատագոյններն, որ ամէն ապականութեանց թոյլտուութիւնն կ'ուզեն քալեցնել իբրեւ օրինաւոր, ինչո՞ւ համար արդեօք այսքան նախանձախնդրութիւն կը յայտնեն կուսակրօնութեան անհաւատարիմներու դէմ. Կուսակրօնութեան առաքինութիւնն է որ իրենց անախորժելի կ'ըլլայ, ո՛չ թէ զեղծումը, զոր անշուշտ իրենց քմայ յարմարագոյն պիտի գտնեն:

Սակայն բնական օրէնք է ամուսնանալն և ամենուն ըսուեցաւ. «Անեցեք եւ բազմացաւուք» — Հասարակ օրէնքն մասնաւորներու մէջ բացառութիւն կը վերցնէ. Բանի քանի ֆիզիքական օրէնքներ մասնաւոր պարագայներու մէջ կը խափանուին նոյն իսկ բնութեան մէջ, եթէ ցօրենի հատիկ հարկաւորապէս սեքմ ըլլալու որոշած ըլլար՝ հացը չէինք ունենար. Արեւու ջերմութիւնը կեդ-

բոնաճիգ ձգողութիւնը երկրիս, կրակին հըր-
ձիգութիւն, հասարակ օրէնքներ են, որ ի
մասնաւորին կրնան մնասակար ըլլալ և հարկ
է որ մենք իսկ խափանենք:

«Աճեցէք և բազմացարուք» օրէնքը միայն
ամուսնութեամբ չէ որ կրնայ պահուիլ: Vis-
conte de Bernard ըսած է. «Ընկերութիւնը
կը պահուի յարաճուն և կը տարածուի աւե-
լի ընտանեկան կեանքի հաւատարմութեամբ
քան ամուսնութեանց յաճախութեամբ»: Ընտանեաց
համառ բարոյականի մաքրու-
թիւնը, զաւակաց լաւ դաստիարակութիւնը,
դաստիարակներու աշխարհի հրապոյրներու
և ապականութեանց դէմ հակազդող գործը՝
դեղերէ, անունդէ և ամուսնութենէ աւելի
կ'ապահովէ մարդկային սեռի աճեցումը:

Եւ այս կէտին գտէ՛ք կոյս անձերէ աւե-
լի յարմար դաստիարակներ. անոնք մտքեր-
նին ու սրտերնին ուրիշի հետ չբաժնած, ամե-
բողջովին կը նուիրուին այդ գործին և պատ-
մութիւնը վկայ է՝ թէ ինչ անձնուիրու-
թեամբ, Հոս տեղն է մեր Շարականաց վսեմ
իմաստուն երգելու. «Մըման Կուսանք ազ-
գրս բազումս եւ մարք մանկունք զհրապա-
րակս ծերոց ի գիրկս Մըբութեան աղօթից եւ
պահոց աճեցիմ հաւատով զարգացեալք ի
Քրիստոս».— Կոյս Մօր սերունդը հրաշալիօ-
րէն բազմածնունդ է ամուսնացողներէ աւե-
լի կ'երաշխաւորէ սուրբ ամուսնութեան օ-
րէնքը. — Մայրապետ բառը որ մեր լեզուով
այդ կոյսերու տուած ենք՝ վայելուչ բացա-
տրութիւն մըն է այս հրաշալի դերն ունեցող
«Սիրոյն Քրիստոսի» նուիրեալ անձանց:

Չէ՛, միայն մարմնաւոր ամուսնութեամբ
չէ որ մարդս ընկերութեան կը գործակցի.
արհեստի, գիտութեան, առաքինութեան,
Աստուծոյ հետ հարսնացում ու փեսայացում
կայ: — Մարդը ընկերութեան մէջ բնակա-
նաբար իր ամբողջացումը կը փնտռէ, և եթէ
միմ' քնէն արթնցած կողը պակաս կը գտնէ
և կը փնտռէ զայն ամբողջացնողն ըսելով
նախահօր հետ «Այս ոսկր յոսկերէ իմմէ, սա
կոչեացի կին».— ուրիշներ ալ բնական կարո-
ղութեանց, մաքրի, պիւցազնութեան, գերբ-
նական կեանքի, երկնապաշտ վերաբերումներու

պակասն կը գտնեն և կը փնտռեն անոնց
իւրացումն. և հոս է որ արհեստի գիտութեան
ու առաքինութեան դիւցազներ կը գտնենք:
Պղատոն, Բիզակորաս փիլիսոփայք, Միքէլ
Անճէլօ, Դանուա ճարտարարուեստք ամուրի
վիճակի շնորհիւ կրցան իրենց գաղափարա-
կանին հարսնանալ ու հիացնել աշխարհքը:
Քրիստոնէական պիւցազնութիւնները անա-
պատներու խորիւրդ ամայի կղզիներու մէջ,
վայրենեաց քով ամէն գիտութեանց ու մե-
ծագործութեանց հետ պիտի միան արձանա-
գրուած անհերքելիօրէն:

Ամուսնութիւնը ընտանեկան յարկի մը
սեղմ որմերուն մէջ կը փակէ մարդկային
ձգտումներու գործունէութիւնը: Կուսակրօ-
նութիւնը կ'ընդարձակէ զայն ամէն կողմ:
Աստուածային է կուսակրօնութիւնը, մարդ-
կային է ամուսնութիւնը և կը համեմատի
անոր առաւելութիւնը Հոգւոյն մարմնոյ վրայ
ունեցող գերազանցութեան: Վեր, ուրեմն,
քիչ մը վեր ցեխոտ տեսութիւններէ, երկրա-
քարչ ապականութենէ, հեղձիչ նեխութիւն-
ներէ, լպիրչ վավաչոտութիւններէ, ազնուա-
գոյն մթնոլորտի մը մէջ փոխադրուինք և
այն տեղէն սեւեռներ աչքերնիս կուսակրօ-
նութեան վրայ: Լուսանքներու գարշութիւ-
նը, լկտի գրիչներու ապականիչ մրուրն՝
թշնամի օձի թոյնը պիտի ըլլայ սպառնացող
կոյս գարշապարներու առանց համեմուտ ա-
սոնց ու պիտի կռուին այդ գեանաքարչ տ-
ղունները գալարելու իրենց թոյնի ժայթքու-
մին մէջ:

Այս գեղեցիկ բացատրութիւններէ ետքը
ուխտագրութեան սիրուն արարողութիւնը
խորապէս յուզեց խռնուած բազմութիւնը:
Վարժարանի աշակերտուհեաց կողմանէ ներ-
դաշնակօրէն երգուած մեղեդիներու օրորու-
մով նուիրուած անձին կենդանի թաղումն
աշխարհի, և պատրաստ ընդառաջումն երկ-
նաւոր փեսային ի Ս. Հաղորդութեան, ու-
րուն առջեւ կարգաց իր ուխտը, պատկեր
մը եղաւ տեսանելի այն հոգեկան անցու-
դարձին որ տեղի կ'ունենար անտեսանելիօ-
րէն Յիսուսի և իւր նոր հարսին միջեւ: Օրհ-
նեալ ըլլայ Կաթողիկէ Եկեղեցին: Դպրոց
դիւցազուններու, արօտավայր շուշաններու,
որոնց մէջ կը հովուէ երկնաւոր փեսայն:

Փ.

ՍԻԼՍԻԼԷ (Տեղամի)

Եվլասը՝ մը :

Սիրանի պիրագաճըզ թէրագըը իթտիյինտէ քէնտի քէնտիսինէ . խայըր , պէն պապամ կիպի ահմագ օլմագ իսթէմէմ . . . պիր կիւն ֆէսիսի նիքեան արգասընա տիւշմէքտէն իսէ , գաթիէն էվլէնմէմ , վէսսէլամ տէր :

Շուէնը տա իլավէ իտէր քի «եա էվլէնիսլ տէ յօլուզ չօճուզ սահիպի օլմագ , օնլար իչին զահմէթ չէքմէք . . . եօրուլմագ չէքիլիթ չէլլէրաէն մի տիր» :

Պինաէն ալէյհ , նիքեանսըզ օլարագ վագըթ կէչիթիթ վէ պու կիւն բէրէսթիլ իթտիյինտէն եարըն վագ կէչէրտի :

Ճագաթ կիւնիւն պիրինտէ հէր տիւրլիւ թէտպիրլէրինէ բաղմէն , պիր էվլատը օլտու : Օ կիւն քէնտիսի իչին ատէթա պիր ֆէլաքէթ կիւնիւ իտի . . . չըտորմը պիր մէճուէն կիպի նէ սէօլէտիյինի պիլմէզ վէ գօրարաճագ տէրէճէտէ սաչլարընը եօլարտը :

Ոսան նա խահ օնա քէնտի իամինի վէրմէյէ բագի օլտու իսէ տէ , գաթէն հիւնի գապուլ կէօրմէմիլ օլան պու չօճուզ ֆագլա պիր չէյ մէսապէսինտէ թութուլարագ օնուէն թէրպիյէսիյլէ քիմսէ մէշղուլ օլմատըղընտան ֆէվգէլատէ ֆէնա պիր սուրէթտէ պէօյիւտիւ :

* *

Պու քօրուըր՝ մը :

Թարլալարտա խիւտայի նապիթ պիր օթ միսիլու պէօյիւյօրտը . . . վէ նէ օլտուղընտան քիմսէնին հիչ պիր խապէրի եօզ իտի :

Իշթէ օ պիր կիւն պու չարպըն թօրուէն պէօյիւք պապասը զագէթալը աչտըղընտա քէմալը հայրէթլէ շու սաթըրլարը եագըլը կէօրտիւ :

«Բէնգօնս սօգաղընտա իխթիյար գատընը գաթլ էյլէմիլ օլան ճանի , Շուէթ եախօտ թրուպատօր թապիր օլունան 16 եաչլարընտա Ժան Պրապանսօն նամընտա պիր չօճուզ օլտուղը զապըթա թարաֆընտան քէշֆ իտիլմէքլէ , զէնճիրպէնտ օլարագ հապսա իլգա իտիլմիլ տիր : Պէլքի տէ պագի գալան հայաթընը օրատա իքմալ իտէր» :

* *

Իշթէ պու սուրէթլէ քէնսիսի պիր քրիսթիան ալիէյէ մէնսուպ օլտուղը հալտէ . . . սէպէպիլլէ գարըսընտան ալըրմըլ , ախէագսըզ պիր էվլատ վէ շիմտի տէ գաթիլ վէ ճանի պիր թօրուէն սահիպի օլմուշ օլտուղընը խաթըրա կէթիթէրէք տէրին պիր ահուզար չէքէր վէ կէօլլէրի եաչ իլէ սօլու օլարագ շու իգրարտա պուլունըր :

— Աշխարհականլար թարաֆընտան վէրիլէն թալիմ ու թէրպիյէնին մահսուլը տըր պու . . . Ալլահընը զայիպ իթմիլ օլան պիր գալմըն նէթիճէսի պունտան ֆարգլը պիր հալտէ օլմագ օլտուղընը շիմտի ինտէթ թէճրիպէ անլատըմ , էյ վահ եագըզ օլտու պանա տա , էվլատըմ տա . . . պէտպախթ թօրունըմ տա . . . Հալպու քի էպէվէյիմին հօլընտա , օնլարըն հիսսիյաթը տինիլլէրինտէ տէվամ իթմիլ օլամ , օնլար կիպի պէն տէ գաթօլիք մէզնէպիլմէ սատըզ պուլունտամալ , պու հալլէր պէնիմ տէ էվլատընըն տա թօրունըմ տա պաշընտ կէլմէյէճէքլէրտի . . . Նէ մութլու պու ֆէլաքէթիմտէն տէրսի իպրէթ ալանլարա . . .

Խ Ի Թ Ա Մ

ԳՆԱՍՏԱՍԱ ԳՍԹՕԼԻՔԼԻԲ

Ամէրիգանըն Գանատա կյալէթի իտարէլի բուհանիյէճէ տօգուզ տաիրէյէ միւնգասիմ տիր :

Պունլարտան պիրինճիսի պուլունան Հալիֆաքս տայիրէսինտէ պէշ թեմ մէվճուտ օլուպ մէզքիւր պէշ թեմիլէրին գաթօլիք նուֆուսը 337,911 նուֆուսա պալիլ օլմագտա տըր :

Իքինճի տայիրէ Բէպէք տայիրէսի տիր քի պու տայիրէտէ տախի պէշ թեմ վէ պիր տէ բաքալըզ վէքեալէթի մէվճուտ օլուպ , 742,930ը ֆրանսըզ գաթօլիյի վէ 25,231ի տէ միլէլի միւլթէլիֆէտէն օլմագ իւզրէ 768,161 նուֆուսա գաթօլիք վար տըր :

Իւչիւնճիւ տայիրէ , եինէ պէշ թեմի հալի օլան Մօնրէալ տայիրէսի տիր : Պու տայիրէտէ 761,520սի ֆրանսըզ գաթօլիյի վէ 78,044իւ միլէլի տայիրէտէն օլմագ իւզրէ 839,564 նուֆուսա գաթօլիք պուլընմագտա

օլուպ, պու հէվալիտէ մէվճուտ օլան բրօթէսթանլարըն մըգտարը իսէ 28.858 նուֆուստան իպարէթ տիր:

Տէօրտիւնճիւ տայիրէ, Օթթավա տայիրէսի օլուպ, պիր բաբալըք վէքեալէթի իլէ իւլ տէ թեմի վար տըր քի պու տայիրէնին ումում գաթօլիքլէրի 151,765 նուֆուս տիր:

Պէշինճի տայիրէ, տէօրթ թեմի պուլընան Քինկսթըն տայիրէսի տիր քի Ֆրանսըզ, իթալիան, Աւսթրիալը, Բօլոնիալը, Պէլճիքալը, Հինտլի վէ սայիրէ միլլէթլէրտէն միւթէլէքսիլ օլան 149,525 նուֆուս գաթօլիլի վար տըր:

Ալթընճը տայիրէ թօրօնթօ տայիրէսի տիր. պու տայիրէտէ իւլ պէօլլէք թեմ մէվճուտ օլուպ գաթօլիքլէրին մէճմուրը իսէ 192.728 նուֆուս տըր:

Եէտինճի տայիրէ, Աէն-Պօնիֆաս տայիրէսի օլուպ իքի թեմի վէ պիր տէ բաբալըք վէքեալէթին չամիլ օլմագտա տըր քի պու տայիրէտէ տախի միւթէլիֆ միլլէթլէրտէն 170,613 նուֆուս գաթօլիք մէվճուտ տըր:

Սէքիլինճի տայիրէ, իքի բաբալըք վէքեալէթի վէ իքի տէ թեմի պուլընան էսմընթըն տայիրէսի տիր քի պու տայիրէնին միւթէլիֆ լիսանլար թէքէլլիւմ էլէյէն գաթօլիքլէրի 60,925 նուֆուս տըր:

Տօլուզընճը տայիրէ իքի թեմի վէ պիր տէ թիյաոէթի ըտսուլանէյի ճամի օլան Վանքըվըր տայիրէսի տիր քի Ֆրանսըզ, իթալիան, Հինտլի, Բիւթէն, Իսկիլիզ վէ սայիրէ գաթօլիքլէրա մէնսուպ գաթօլիքլէրին մըգտարը 60,691 նուֆուս տըր:

Իչպու ճէտվէյ Գանատա հիւքիւմէթինին ըէսմի սթաթիսթիք ճէտվէլինտէն չըգարըլմըլ օլուպ, չուրասը տա չայանը մէմնուհիյէթ պուլընմըլ տըր քի Եէնի տիւնեանըն հէր ճիհէթինտէ օլտուզը կիպի, Գանատատա տախի գաթօլիք մէզհէպի կիւնտէն կիւնթէրազըլ իթմէքտէ տիր. չուրքի 1901 սթաթիսթիք ճէտվէլինտէ 5,371,315 նուֆուսըն 2,223,599 նուֆուսը գաթօլիք կէօրիւտիլի հալտէ, պու կիւնքի սթաթիսթիք ճէտվէլինտէ 2,833,041 նուֆուս գաթօլիք մէվճուտ տըր:

* * * ԶԸԳԱՆ 1913 սէնէսի զարֆընտա Խնկիլթէրրատա միւթէլիֆ Բրօթէսթան ֆըրգալարընտան ալըլարազ գաթօլիք քիլիսասընա տախիլ օլան վէ գաթօլիք մէզհէպինի գապուլ իտէնլէրին ատէտի նուֆուսը պէր վէճհի աթի տիր, Էանի Ուէսթմիսթրատա 1359, Լիվրուլտա 1102, Քիլիֆթընտա 189, Հօքսհամ վէ Նիւքասլտա 931, Լիտատէ 637, Միտուլպըրֆտա 138, Նիւքօրթտա 200, Նօրթհամթընտա 253, Բիլմուլթտա 190, Բորթսմուլթտա 310, Շրուզպրիտէ 262, Սուլթուարքտա 911 վէ Մանէվիատա 29 նուֆուս գաթօլիք մէզհէպինի գապուլ իթմիշտիլլէր: Պուլարտան մատա Պիրմէնկհամ, Նըթթինկհամ վէ Սալֆըրտտա տախի միւթէլիֆ դաւճլար վազը օլմուչսա տա, ճուլարըն մըգտարը նուֆուսը սալնամէնին թապը գէմանընա գատար էլտէ իտիլէմէմիշ տիր:

Խնկիլթէրրա իմբէրաթօրըլընըն զիլի իտարէսինտէ պուլընան գաթօլիքլէրին 5 միլ. 800,526սը Ալթօքատա, 288.898ի Ասիատա, 493,965ի Աֆրիգատա, 3,271,353ի Ամէրիգատա, 1,184,50ի Ավսթրալիատա պուլընմագտա ալըլար: Պինաէն ալէյ, Խնկիլիզ իմբէրաթօրըլընա թապի օլան 13,386,565 գաթօլիք վար տըր: Միւճթէմիալը Ամէրիգատա վէ Ամէրիգանըն Բասիֆիք միւթէլիքեաթընտա տախի 24,189,941 նուֆուս գաթօլիք մէվճուտ օլուպ, օ հալտէ ինկիլիզ լիսանըն թէքէլլիւմ իտէն գաթօլիքլէրին մըգտարը 37,576,506 նուֆուս տըր: Ումում տիւնեա գաթօլիքլէրի իսէ 298,734,824 նուֆուս րատտէսինտէ իթիպար օլընմագտա տըր:

Ն Ա Մ Ա Վ

ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Է Զ Մ Ի Ա Մ Ն Ի

(Շար.)

Եւ Մաթէոս կաթողիկոսն Սըսա ուր փախուստ էր ձեռաց Աւետիք վարդապետին յաղագս դէմի և վիճակի Սուրբ Էջմիածնի կամէր հատանել և գրել ի վերա տանն Սը:

սա, վասն որոյ Աւետիք վարդապետն ծա-
նուցեալ խորհուրդս զայս և յոյժ սրտմտեալ
և առեալ Ֆէրման թագաւորական զի աք-
սորեսցէ զՄաթէոս Կաթուղիկոսն բռնու-
թեամբ ի Սուրբ Էջմիածին առ Նահապետ
Կաթուղիկոսն՝ որպէս և կամիցէ՝ նա արասցէ
դատաստան ի Սեւան. զայս լուեալ Մա-
թէոսի՝ եղեւ փախուստ մինչ վերանալն Ա-
ւետիք վարդապետին՝ և ապա յարուցեալ՝
և զնա եզին առաջնորդ յերուսաղեմայ. եւ
հերձուածողքն տիրեցին զեկեղեցիս մեր, եւ
Լուսաւորչածին ժողովուրդս անտանել սուգ
սգեցեալ և արարին հալածանս ի վերայ մեր.
Եւ ըմբռնեալ գլխաւորացն մերոց մինչ Խ.
մարդ. երկու քահանայս զՏէր Մանուէլ և
Տէր Յովհաննէս. Բ. Աշխարհականաց զԽոճա
Մարգար Պարթեւազն, և Խոճա Սահակն՝
ընդ վարդապետին աքսորեցին և մինչ Խ.
մարդ ուղղափառացս ի քիւրէկն և այլք
խստագոյն տեղի արդիւեալ որպէս յաւուրն
Թէոթոսի կայսեր արխանտքն տիրեցին զե-
կեղեցի ուղղափառաց. եւ նոր Պատրիարքն
յերուսաղեմայ զՄաթէոս Կաթուղիկոսն Սը-
ռա՝ սկսաւ քարոզ կարգալ զի ձեռնադրեսցէ
զՄարտիրոս վարդապետն եպիսկոպոս և
Պատրիարք Կոստանդինուպոլսոյ և այլք վար-
դապետք եղեն ընդ նմա եպիսկոպոսք ի մէջ
Սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ. եւ ժողո-
վրդեանս խորհուրդեալ ի վերայ Կաթուղի-
կոսին. եթէ չէ օրէն Սոս Կաթուղիկոսն
ձեռնադրութիւն առնել ի վիճակս Սուրբ
Էջմիածնի. եւ դարձեալ սկսան խորհուրդ
առնել անօրէնութեան, և ետ խոստանալ
ԺԲ. քիսէ զրամ նոյն Ըրայիսին զի առա-
քեսցէ դահիճ, և սոլանցեն զվարդապետն ի
կղզւոյն, և զլուխն բերցեն առ ի ցոյցս ժո-
ղովրդեանն Աստուծոյ ի նախատինս և իւր-
եանց պարծանք. եւ աշակերտն իւր Մար-
տիրոս վարդապետն և Մաթէոս Կաթուղի-
կոսն և մահտեսի Հայրապետն և այլ Ախ-
թարմայիւք գնացեալ վկայեցին առաջի Շէխ
Իսլամի՝ բազում բարուրս եթէ արիւն նորա
եզիցի ի վերայ մեր, և քեզ սավապ, տուր
մեզ զգիր վճիռ սպանմանն. եւ Շէխ Իսլամն
բարկացեալ ի վերայ Հարեաց ասելով՝ նա

Ըրուհւոյն է, նորա բնաւին մահ ոչ գոյ՝ մի-
թէ Աստուծոյ գայցէ. եւ անտի գնացին
Ֆռանսու պալեօղն աղաչելով հակառակ է
հաւատոցն ձեր՝ և մերոյ խանգարումն՝ զի
գերեացես և տարցես յերկիրն ձեր՝ և անդ
փախն որպէս և կամի սպանցէ. եւ եկեալ
կրկնակի կաշառեցին բռնաւորքն, և առեալ
գիր Ըրայիսէն՝ հանցեն վարդապետն եւ տար-
ցեն յայլ հեռագոյն կղզի և ի սանել ի վի-
րայ ծովին՝ և զիցեն յայլ նաւի ֆռանկաց և
գերեացեն եւ արարին այնպէս. եւ եղեալ
երկաթի կապանօք յոտս եւ ի պարանոցն
տարեալ յերկիր ֆռանսայու և ի քաղաքն
Մեսինէ բերդն. եւ մեք լուսահատեալ զվար-
դապետէն եթէ ծովահեղձ արտրեալ չէաք
գիտակ թէ ընդ ո՞ր տարան. Բեռ Բ. ամսոյ
եկն իւրոյ ձեռաց գիրն վարդապետին և գրը-
եալ զամենայն գիրս տանջանացն եւ խնդրեալ
ի մէջ օգնո... առ հոգեւոր հօրն մերո
իմոյ Տեառն Աղեքսանդրի. և այլն ընդ այլ
գրումն զեկուցից հրամանուցդ. եւ մեք ել-
եալ ամբոխիւ արդ արարաք թագաւորին,
զամենայն զիրան և զկաշառօք զվարդապետն
մեր գերեցուցին պալեօղի խորհրդեամբն և
ումանց մերոց թելադրութեամբն որք հակա-
ռակ կան թագաւորութեան հրամանի քում
և թագաւորն ծանուցեալ զամենայն, ընկէց
զեպարքոսն եպարքոսութենէ և աքսորեաց
զրայիսն եղեալ ի բանտ Հարաշար տանջա-
նօք, զամենայն գիրս յափշտակեալ ի յար-
քունուստ. եւ ետուր զեպարքոսութիւնն
յայլում. եւ նոր եպարքոսն ազատեալ զա-
մենայն բանտարգիւսան լուսաւորչածին
զժողովրդենէս որք ի ձեռաց հերձուածողացն
եղեալ էին, եւ ել հրաման թագաւորէն այս-
պէս՝ եթէ որքան Հայոց յազգէն թագաւորի
խային և ֆռանկացեալքն ըմբռնել եւ զփա-
խուցեալքն ի տունս իւրեանց կոխել եւ հա-
նել զնել ի թէրահանէս երկաթի կապանօք.
եւ Աւետիք վարդապետն ուր եւ իցէ բեր-
ցին. եւ Սուրբ Լուսաւորչի կիրակի առա-
ւօտուն զԿոստանդինուպոլսոյ զՄարտիրոս
նոր Պատրիարքն զոր մատնաց զտէր իւր նա
ըմբռնեալ ի Ղալաթիոյ Լուսաւորչի եկեղեց-
ւոյ միջումն որ ի նմին ժամի ինքն էր պատա-

րագիշ . եւ իջուցեալ ի խորանէն եւ բերեալ լռնութեամբ առ եպարքոսն : եւ անտի զմիւս տուն Մաթէոս կաթուղիկոսն բերել որ էր առաջնորդ յերուսաղէմայ ըմբռնեալ զնա բերեալ է , արամբք , հանեալ զերկոսինն , Մարտիրոսն եւ զՄատթէոսն առաջի եպարքոսին : եւ եպարքոսն հրամեց սոռ մեզ թէ զայ ի միջի ձերում վարդապետ Աւետիքցի՝ եւ հմուտ զոյի յօրինացն ձերոց՝ նա նստցի նորա փոխանորդ մինչ Աւետիք Ըրուհպան գալցէ եւ ի նմին ժամու ոչ գոյր վարդապետ ի մերոց . եւ բերայք Ոսրբերդցի զՏէր Միքայէլ երէցն որ էր վէճի յառաջմէ վարդապետին մերոյ եւ եպարքոսն՝ առաջի աջայ Մարտիրոսին եւ Մատթէոսին արկաւ հանդերձս պատրիարքական ի վերայ Միքայէլ երիցուն պահեցէ յաթոռն մինչ գայցէ վարդապետն , եւ կաթուղիկոսն , Մարտիրոսն , հանդերձ է . արամբք եւ ԼԳ . արամբք ի նմին ժամու առաքեաց կապանօք թէրս հանէ՝ որ է տեղիք գերութեան որ ասի թաշ քիւրէկն , եւ եղեալ չլթայս ծանոթահակս եւ այս հրաշս Լուսաւորչի կիրակի առաւօտս եղեւ՝ զի տեսցն հերձուածք եւ յամօթ լիցին : եւ քանիցս անգամ յառաջագոյն որք պարտաւորեալ պատժեցան եւ ի Հօրն Լուսաւորչի պահոցն եւ կիրակին հանդիպեալ . եւ յիտ այնք զաշֆալի խնդրեցն եպարքոսէ : Կոչեաց ուղղափառացն թիւ արկանել թէ որքան Ոսթարմա գոյ ի միջի ձերում . զաշֆալէրն բերէք ինձ : եւ զրեցաք զզխաւորաց ԼԳ . մարդ եւ այլան : ե . ասկս ամէնն ոչ զրեցաք եւ տարեալ տվաք : եւ ի սմին ժամու եկն Յովհաննէս վարդապետ Ըստամպօլ որ էր սիրելի եւ բարեկամ Աւետիք վարդապետին , եւ սա էր յերկրէն Աճմա եղէգացի , եւ սիրտ սորա յոյժ ցաւեաց ի վերայ վարդապետին գերութեանն . եւ վահանաւորեալ սմա եղեւ առաջակա Լուսաւորչածին ժողովրդեանս՝ եւ եպարքոսն առաքեաց գունգս միւս կիրակի առաւօտուն՝ կոչեաց զՓռանսուս ժամն՝ եւ ըմբռնեցին ի՛՛ . մարդ . եւ այլքն փախեան եւ ի նմի ժամու առաքեաց քիւրէկն , եւ սկսան ըմբռնել մինչ Զ . մարդ , եւ կին մի այլ ի զտանն . այս Զ . ամիս

է որ ոչ եղեւ հնար ազատման նոցա . եւ այլք փախեան յայլ երկիր . եւ այլք ի տունս իւրեանց են թագստի՝ որպէս հալածի եղէքն ի կայծականց՝ այնպէս հալածեալ կան չար իշխանքն եւ համախոհիւքն իւրովք : եւ Յովհաննէս վարդապետն արդ խոտուր եպարքոսին , եթէ զքիւրէկի եղեալ կաթուղիկոսն եւ Մարտիրոս վարդապետն է արամբք հանել եւ ի տանջանս զանազան՝ եւ կրակացեալ սաղաւարտ ի գլուխ նոցա եւ ի կախաղանի՝ ոչ արասցես եւ նոքա զուղիղն ոչ ասեն՝ թէ որպիսի ինչ իւրք՝ եւ կամ որոյ թելադրութեամբ եւ կամակցութեամբն գործեցին՝ եւ կամ ուր իցէ վարդապետն՝ կինդանի է թէ մեռեալ , եւ արարին այնպէս : եւ ի տանջանցն իւրեանց խոստովանեցան զուղիղն՝ թէ մեք այն ինչ անուն մարդկանց կամակցութեամբն եւ Փռանսու ելչի հետն խոսիւք՝ եւ նաւ մի ի նոցանէ բռնեցաք Ռեժ զուռուշ զվարձն եւ յղեցաք առ փափին Այլն եւ նոյն գրեցին ի թխդի եւ ծանուցին եպարքոսին եւ նա կոչեաց պալեօզն եւ խիստ յամօթի հարեալ եւ նախատինք . եթէ դու զթագաւորին հարրայան զփաթրիկն զողացեալ յերկրէս , եւ նա ինքեար հրաժարեցաւ թէ ոչ գիտեմ , եւ վարդապետն եկեալ զիրն ցոյց ետ իւրն եւ Բ . տաճիկ գերի որ բերեալ էին զգիրն՝ եւ նոքա վկայեցին թէ՝ մեք տեսաք զվարդապետն Մեսինէ քաղաքն ի Նաղարէթն երկաթի կապանօք . եւ աղաղակեաց մեզ՝ զգիրս բերաք . եւ պալեօզն ասաց թէ՝ տեսանեմք հարցաքննեմք զիր յղեմք թէ անդէ բերցին՝ սակայն ես այդ բանէդ խապար չեմ : եւ եպարքոսն կրկին կրկին թէնպիս արարեալ թէ զայս բանս թագաւորին լուրն եհաս՝ անհնարին է եթէ ոչ բերցես՝ մեծ վնաս կրելոց էք՝ ահա ասացի ձեզ : եւ Լուսաւորչաւ ծին ժողովուրդքս միահաղուն սուգ՝ եւ մեծի խոտովութեան միջի եմք՝ իբրեւ զժողու ալիս լի ծրամաք՝ որ ոչ գոյ հանդարտութիւն՝ զի ամենայն աւուր Յովհաննէս վարդապետուն երթեալեկուրին առնեմք հանապաղ ի զուռս արքունական աշխատիմք արդունալի՝ վասն գալստեանն վարդապետին՝ ակն ունիմք ամենայն ժամու :

(Շարունակելի)

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ(°)
(Շար.)

Աբերկիոսի թանկագին վիմարձանագրի կտորը, ինչպէս ըսինք, Արեւելքէն ղրկուեցաւ ի Հոռոմ, ուր անիկայ պատուոյ տեղը կը գրաւէ Լատերանու քրիստոնէական թանգարանին մէջ։ Արեւելեան եպիսկոպոսի մը այս արձանագիրը՝ ղետեղուած հոն՝ Քահանայապետներու պատրիարքական հին բնակարանին մէջ, այն Լատերանեան Պալատան մէջ զոր Կոստանդիանոս պարգեւեց Ս. Միլետիոսի մէջ՝ երբ Կայսրերու զաւազանը առաջին անգամ խոնարհեցաւ Ս. Պետրոսի բանալիներուն առջեւ, այս արձանագիրը, կ'ըսեմ, բարեգուշակ է այնպիսի տեղւոյ մը մէջ, գրեթէ նախագուշակութիւն մըն է ան՝ ա՛յնքան ցանկացեալ օրուան, օր միաբանութեան և սիրոյ, որուն մէջ արեւելեան նոյն իրապետութիւնը պիտի ծանչնայ հին Հոռոմայ Եպիսկոպոսապետին գլխաւորութիւնը։

Աբերկիոսի արձանագրութիւնը կը հաւաստէ մեզ առաջին հաւատացելոց համախումբ ժողովները. առիթ կ'ընծայէ ինծի այս իմ ընթերցողիս համառօտակի խօսելու Հոռոմայ գետնադամբաններուն մէջ կատարուած Ս. Հաղորդութեան կանոններուն վրայ և սով պիտի վերջացնեմ յօդուածներուն շարքը։ Բացարձակապէս ապացուցուած է սրգէն որ ամենահին ժամանակներէ ի վեր սովորութիւն եղած էր Ս. Պատարագի արարողութիւնը կատարել մարտիրոսներու շիրիմներուն վրայ. Ս. Պողիկարպոսի վկայաբանութիւնը միայն բաւական պիտի ըլլար զայն մեզ ապացուցանելու. իր մարտիրոսութենէն քիչ վերջը կրուեցաւ այն, յամին 155, և հոն կը հաւաստուի որ իր վկայական մահուան տարեդարձին օրը պէտք էր պատարագ մը մատուցանել իր գերեզմանին քով։ Միեւնոյն բանը կը պատմուի մարտիրոսներու ուրիշ բազմաթիւ վաւերական վկայաբանութիւններուն մէջ. բայց նոյն իսկ եթէ պատմական վաւերացութիւններ մունջ մնալու ըլ-

(°) Տե՛ս Թիւ 143, էջ 249։

լային, Հոռոմայ գետնադամբանները պիտի ապացուցանէին մեզ այս առաջարկութեան ճշմարտութիւնը, ներկայացնելով մեզ տեսակ տեսակ ձեւերով շատ մը ստորերկեայ գերեզմանատեղիներ, որոնք անտարակոյս ծառայեցին հաւատացեալներու արարողական ժողովներուն, նոյն իսկ հալածանքի դարերուն մէջ։

Ընդհանրապէս այս համախմբումները ամենայն ազատութեամբ կը կատարուէին, նոյն իսկ Կոստանդիանոսէն ալ առաջ. որովհետեւ ապացուցուած է որ քրիստոնեայք առաջին երեք դարերու մէջ իրենց գերեզմանատուններուն ազատ ստացումն ունէին, երաշխաւորուած ու պաշտպանուած հոգովեական օրէնքէն որ տապաններուն անբռնաբարելի իրաւունքը նուիրագործած էր։ Սակայն այս ազատութիւնը ընդհատումներ ալ ունեցաւ, երբ պետնադամբանները գրաւուեցան, նախ Վաղերիանու թագաւորութեան ատեն յամին 258 և յետոյ Դիոկղետիանոսի ժամանակ։ Ան ատեն ալ քրիստոնեաները պահեցին բարեպաշտ սովորութիւնը հաւաքուելու գերեզմանատուններու մէջ՝ հոն աղօթելու և Ս. Պատարագի զոհ մատուցանելու համար. բայց հալածիչներու բռնութիւնը հասաւ անոնց ետեւէն մինչեւ այն ստորերկրեայ խոր խռոչներու և թաքստոցներու մէջ. և հոն, Սալարեան ճամբուն վրայ, սրբոցն Քրիստոսի և Դարիոսի շիրիմներուն առջեւ. մարտիրոսաց յիշատակութեան պատարագը ընդհատեցաւ՝ ներկաներու մարտիրոսութեամբ. և ստուգապէս գիտենք թէ Ս. Սիքստոս Բ. Քահանայապետը պատարագ ըրած ատեն կայսերական աւագակները վրան յարձակելով իր արժուէն խլեցին, քաղքին մէջ քաշկռտեցին և դատապարտուեցաւ մեռնելու նոյն տեղուան մէջ ուր ժողված էր հաւատացեալները, Ապպեան ճամբուն վրայ. և ան ատեն է որ, երբ կը վերադառնար դէպի գետնադամբանը, իր սարկաւազը Ս. Լաւրենտիոս հասաւ իր ետեւէն, որուն նա մարգարէացաւ անոր ալ փառաւոր մարտիրոսութիւնը։

Այս ժողովներն ու համախմբումները, զորոնք Վաղերիանոս արգելած էր հաւատա-

ցեալներուն, կ'ապացուցանեն գետնադամ-
բաններու մէջ Հաղորդութիւն առնելու սո-
վորութիւնը, զոր սրբոյն Տարկիսիոսի եղե-
րական մահը՝ որ Ս. Հաղորդութեան խոր-
հրդոյն առաջին մարտիրոսն եղաւ, ընդ միշտ
յիշատակելի պիտի ընէ հալածեալ Եկեղեցւոյ
պանծայլի տարեգիրներուն մէջ: Հ'ոն էր,
միշտ Ապպեան ճամբուն վրայ, հռովմէական
յաղթականներու ճամբան, ապա մարտիրոս-
ներու յաղթական ճամբայ եղած, որ երի-
տասարդ ժառանգաւորը՝ որ Քրիստոսի բան-
տարկեալ խոստովանողներուն կը տանէր
Զօրաւորաց Հացը, աւելի ուզեց մեռնիլ քան
թէ սուրբ խորհուրդը յանձնել անսուրբնե-
րու:

Ոյր վասն մեծն Ս. Դամասոս Քահանա-
յապետը նուիրեց անոր սա գեղեցիկ ոտանա-
ւոր գովաբանութիւնը, զոր քանդակել տը-
ւաւ անոր գերեզմանին վրայ:

Զսուրբ Տարկիսիոս որ Քրիստոսի խորհուրդներ կը օսէր
Երկ Կաթողի ջոյիւն սօրիւն որ յանձնէ զայն պիղծելու,
Գերադասեց նա օալ հագին՝ հրաբորոքմամբ իղծելու,
Քան Կաթողի Եանցր մասնի երկնաւոր սուրբ անդամներ:

Այս խօսքերով բանաստեղծ Քահանայա-
պետը հանդիսապէս կը վկայէ եկեղեցւոյ հա-
ւատքին՝ իրական ներկայութեանը Քրիստո-
սի ի Ս. Հաղորդութեան:

Երբ Կոստանդիանոս կայսեր Ս. Եկեղեց-
ւոյ սուրբ խաղաղութեան երջանիկ օրերը
հասան, մարտիրոսներու հանգստարան շի-
րիմներուն վրայ արարողական ստորերկրեայ
համախմբումները հալածանաց արիւնալի օ-
րերուն հետ չզաղորեցան. ան ատեն, նախ-
նական խեղճ մատուռներու սրբատեղւոյն
վրայ կառուցուեցան կանգնեցան չքեղ Մայր
Տաճարներ, բայց ասոր համար առհասարակ
չխափանուեցան գետնադամբաններու մէջ
ժողովուելու և հաղորդուելու բարեպաշ-
տական սովորութիւնը: Եւ Պրուտենտիոս,
որ չորրորդ դարուն վերջերը այցելեց Հռոմի
գետնաբանները, Ս. Հիպպոլիտեայ մա-
տուռը նկարագրելով, — որ կը գտնուէր Տի-
պուրտեան պողոտային վրայ, — այսպէս կը
մատնանչէ մեզ Ս. Սեղանն ուսկից հաւա-
տացեալներու կը բաշխուէր Ս. Հաղորդու-
թիւնը:

Անա սեղան պարգեւարաւի սուրբ Խորհրդայ
Նա՛ եւ պահպան եղեալ իւրոյ նահապահին:
Պահէ ի յոյսն յաւիտենից դատաւորին
Զսկեքս Եիւմին, եւ սրբանուէր Բաղդր ի խնջոյս
Սրնուցանէ զՀռովմէաբնական Դանկառուս յոյս:
(Քերիս. ԺԱ.)

Բանաստեղծը այս տողերով ցոյց կու տայ
այցելուներու այն ահագին բազմութիւնը որ
կը խոնուէր անդադար այս գետնափոր նըր-
բուղիներու մէջ. այս բարեպաշտ հոգիներու
անուններն անգամ, ինչպէս նաև պատերու
և տապանաքարերու վրայ իրենց գծած
ու քանդակած մաղթանքներն ու աղօթք-
ները՝ դեռ այսօր կը վկայեն մեզի իրենց ջեր-
մեռանդութիւնը:

Հըռոմի օրերը յաջորդեցին ապա եռան-
դալից ուխտաւորութիւններու, երբ հաւա-
տոյ դիւցազանց հրաշափառ մնացորդները այս
ստորերկրեայ նկուղներէն փոխադրուեցան Յա-
ւիտենական Քաղաքին չքեղազարդ Մայր-
Եկեղեցիներուն մէջ. և, շուրջ տասը դար
չարունակ, ամէն կերպ համախմբում դադ-
րեցաւ այս մեծարելի գետնափորներուն մէջ
որ կ'երթային ու կործանման կը դիմէին:

Բայց մեղի վերապահուած էր նսեհն ու
փառքը հաւատքի ու գիտութեան վերա-
դարձնելու ա'յնքան մարտիրոսներու ի մո-
ռացոնս արկեալ սրբավայրերը. և այն պա-
տերու մէջ՝ որ առաջին դարերուն համա-
խմբումները տեսած էին, վերանորոգելու Ս.
Պատարագի զոհարեութիւնը և հաւատա-
ցեալներու Հաղորդութիւնը:

(Շարունակելի)

ԲԱՅ ՆԱՍՏԱԿ

Ծ. Կ. Ա. ին

Հեփուսան, 30 Մարտ 1914

Կաթողիկէ Արձագանգի 138րդ թիւին
մէջ, «Նողկալի հրատարակութիւն մը» վեր-
նագրին տակ, ձեր գրած քննադատական-
լուսաբանութիւնը կարգացի մեծաւ ուրա-
խութեամբ: Մեծաւ ուրախութեամբ կ'ըսեմ,
որովհետեւ ձեր գրութիւնը՝ ընդգրմարանու-
թենէ աւելի, միամիտները լուսաբանելու կը

ծառայէր, ու արդէն չէր ալ արժեր գրքոյկներու (թէեւ տեանելու դժբաղդութիւնը չեմ ունեցած. բայց ձեր գրածներէն դատելով) այդ ատկուութիւն դեմ ընդդիմաբանել, քանի որ կեփայեան վէմին վրայ հաստատուած Եկեղեցւոյ Ս. Քառանայապետները՝ քսան դարերէ ի վեր իրենց դերին մէջ ու բարձր դիրքին վրայ կը գտնուին անշարժելիօրէն. իսկ մտ ատկուութիւն նման գրքոյկներու հեղինակներն՝ անարոյսականութեան մինչեւ ատ աստիճանները իջնելու ինքզինքնուն թոյլ տալու ստորին դերին մէջ՝ յեղյեղութեան. մանաւանդ՝ որ ատ մզլահոս գրքոյկը, իր նմաններուն ո՛չ առաջինն է և ո՛չ ալ վերջինը պիտի լինի. զորս կանխատեսելով Քրիստոս Տէրն մեր ըսած է առաքելոց ու անոնց յաջորդներուն. «Եւ եղիքիք ասեցեալ յամենեցուն վասն անուան իմոյ, եւ մագ մի ի գլխոյ ձերմէ ո՛չ կորիցե՛ք» (Ղուկ. ԻԱ. 17. 18.) զի «ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչեւ ի կատարած աւսարհի» (Մատթ. ԻԸ. 20)։

Կը գրէք թէ՝ «Ամէն ուսեալ անձ գիտէ թէ՝ Պապութիւնն աշխարհի ամենէն բարեբար, յառաջդիմաւոր ու քաղաքակրթիչ իշխանութիւնն է եղած, թէ նա հին ու նոր բարդարոսութեանց խնջել թուրք կանգնած, և ժողովային ազգի ժամանակաւոր ու յաւիտեական երջանկութեանը համար խօսած ու գործած է անդուլ՝ մօր մը անզուգական գորովով»։ Միթէ Եկեղեցւոյ ամենէն կատարելի ու չափամով թշնամիներն իսկ չե՞ն գիտեր ատ ամէնը, ու ճիշդ իր ատ դիւցազնական առաքելութեանը համար չե՞ որ Եկեղեցին ամենաբուն կերպով կը հալածուի ու կը նախատուի՝ իր հիմնադիր Մեծ Վարդապետին ժամանակէն սկսեալ մինչեւ ցայսօր։ Միթէ իր անաչառութեամբն ու մեծամեծ բարեգործութիւններովը, Յիսուսի՝ իրեն խաչակցող յայտնի աւազակներէն բերիցս անգամ աւելի նախատուիլն ու չարարուիլը, ու Հրէից ապերախտ ազգին Պոնտացի Պիղատոսէն՝ անմեղ Յիսուսի խաչուիլն ու անոր տեղ արինարբո։ Յետու Բարաբբային ազատ արձակուիլը պահանջելը՝ ասոր ցայտուն ազատ ջոյները չե՞ն . . . :

Արդ՝ այդպիսիներուն համար այլեւս ո՛ր կը մնան, ի՞նչ նշանակութիւն կ'ունենան Հայաստանեայց Եկեղեցւոյ Ս. Հայրերու հոգեզմայլ «Անթառամ ծաղիկներն ու հոգեհմայ «Մաքուր աղանձները. Ատոնք այն ատեն միայն այդ Ս. Հայրերով կը պարծենան՝ երբ պէտք ըլլայ իրենց իմաստակութիւնը պարտկել, առանց մտաբերելու սա թրքական առածը՝ թէ «Մեզար քաւր իյի իմքիլաւ օլունամագ»։ Հետեւաբար, ըստ իս այդպիսիներուն ընդդիմաբանել ևւելի, միամիտները լուսաբանելու և ատոնց համար ալ՝ «Աֆօրօզ գէ գագօռօզ ախըրիանօս գէ արիօս. սիզմագօս գէ հէրէտիգօս անաղէմաւ. ալախ բէլա վէրսին, նէ՛ սիզտէն տիր նէ՛ պիզտէն»¹ ըսելու անցնելու է։

Ա. Յ. Ա.

